ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

27 սեպտեմբերի 2012 թվականի N 142-Ա

ք. Հրազդան

Ֆ. ՊՈՂՈՍՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Համաձայն <<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 4-ի N 319-Ն որոշման 1-ին կետով հաստատված հավելվածի 34-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2012 թվականի սեպտեմբերի 26-ի N 375-Ա որոշման և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության <<Արամուսի Վ. Առաքելյանի անվան միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության կառավարման խորհրդի 2012 թվականի սեպտեմբերի 18-ի N 7 որոշումը՝ **կարգադրում եմ.**

1. ***Ֆրունզ Պողոսյանին*** 2012 թվականի սեպտեմբերի 27-ից նշանակել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության <<Արամուսի Վ. Առաքելյանի անվան միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության գործադիր տնօրեն՝ նրա հետ կնքելով աշխատանքային պայմանագիր հինգ տարի ժամկետով:

2. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչությանը՝ եռօրյա ժամկետում կազմակերպել դպրոցի հանձնման-ընդունման աշխատանքները:

3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ